ՆՈՐ-ԴԱՐ

№ 28 ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հինգշաբթի, 17 Փետրուարի 1894 Հինգշաբթի, 17 Փետրուարի ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 28

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամսով՝ 1 րուբլի, հասով 5 կոպէկ
Բաժանորդ պրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների գինն 2 կոպ., րնկերութիւնների համար կրկնապատիկ:

3-10

Նէքրոլոգ 30 Բաժանորդաթ. XVIII

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, փետրուարի 17-ին, Հայ դերասանական մշտական խումբը

առաջին անգամ՝ կրնակրպացնէ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

կոմ. 3 գործ., յարմար. հայ բեմի համար Ա. Սարդարեան,

Տեղ. ՊԱՐՈՆԵԱՆԻ:

Սկիզբն է $7\frac{1}{2}$ ժամ. երեկոյեան:

Տոմսակները թատրոնի կասսում:

Ա.ՋՐԻ Առաջիկայում Պ. ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆԻ նպաստ ներկայացումը (Թարգմանի ձանապարհորդութիւնը). Հինգշաբթի փետր. 24-ին «ԵՐՈՒԱՆԴԻ II»:

(555) 2—2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Արդեօք եզելութիւն է թէ վաս երեւակայութեան արդիւնք:

Քրոնիկոն. — «Պէլօ» կամիզիան ուսւաց բեմի վրայ: Մուզիկով քահանայի թաղում: Նոր ընտրութիւն Բեթ-դհէմի եկեղեցում: Թամամեանական մի նոր արչաւանք: Մանկանց հասարակական խաղատեղ: Դանդից: Սարովից: Պարսից չահի մի չնորհ: Խոյմեռակից: Նամակ համբարձումեանից:

Թղթակցութիւններ. — Պօղոս-Ֆիլիսաս:

Հաղորդակցութիւն.—Վիլհելմ կայսրի այցելութիւնն իշխան Բիսմարկին:

Քաղաքական լուրեր:

Հեռագիրներ:

Մի երկու խօսք մի թերթի ինձ դէմ գրող վարձկան լրատուներին:

Բանասիրական. — Մեծ գործի սկզբում (չարունակութիւն):

Տեղեկատու:

Յայտարարութիւններ.

Թիֆլիս, 16 փետրուարի 1894 թ.

ԱՐԹԵՑԻ ԵՂԵԼՈՒԹԻՒՆ Է, ԹԷ ՎԱՒՐ ԵՐԵՒԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔ.

—

«Նոր-Դար»-ի նախընթաց համարներից մէկում (№ 22) հրատարակեցինք տեղւոյս օսմանեան հիւպատոսի մեզ ուղղած մի հերքումը:

Յարգելի հիւպատոսը չէ ուզում հաւատալ, որ հայոց թերթերը կարող են տեղեակ լինել Փոքր-Ասիայում կատարուող անցքերին, և այն ամեն քաջագործութիւնները, որ հայրրդում է հայ մամուլը Համիդիէ կոչուած քրդական գնդերի մասին, վաս երեւակայութեան արդիւնք է համարում: Որ յիշեալ գնդերին պատկանող քրդեր յարձակուել են մի հայոց գիւղի վրայ, կողոպտել են գիւղացիներին, բռնաբարել են մատաղահաս աղջիկանց —այդ ամենը յարգելի հիւպատոսը հնարովի բան է համարում:

Եւ այդ ամենը նրա համար, որ հայոց մամուլը, ինչպէս պնդում է յարգելի հիւպատոսը, մի որոշ բան չէ ասում և չէ անուանում «այն գիւղի անունը, ուր պատահել են այդ ազեաալի անցքերը»:

Մենք մեր կողմից շատ ուրախ կըլինէինք, որ այդ դէպքում սխալուողը հայոց մամուլը լինէր, սխալուողը «Նոր-Դար»-ը լինէր: Սրդարև ոչ մի մարդու համար հաճելի չէ տեսնել, թէ ինչպէս իզուր տեղը մարդիկ անօրինաբար հալածւում և կրում են ամեն տեսակ զրկանքներ. ոչ մի հայ չի կամենալ, որ իւր արիւնակից եղբայրները՝ զրկուած մարդկային անբռնաբարելի իրաւունքներից՝ զոհ գնան վայրագ քրդերին:

Այդ իսկ պատճառով մեծ ցաւ է մեզ համար, որ «Փոքր-Ասիայից» գանգատներն ուղղանում են և չեն պակասում:

Ցեղւոյս օսմանեան յարգելի հիւպատոսը մեզ դիմելով ցանկութիւն է յայտնում, որ մի որև է ազեաալի գէպքի մասին լուր հաղորդելով, հայոց մամուլն անուանէ և տեղը, այսինքն՝ թէ արաեղ է այդ գէպքը տեղի ունեցել:

Արդ՝ այդ արդարայի պահանջը գոհացնելու համար կամենում ենք մի քանի ազեաալի գէպքեր արձանագրել այստեղ, որ տեղի են ունեցել անցեալ յունուար ամսում:

Այս վերջերումս Ալաշկերտի Թաքրաղլեցի մի անուանի վերդասանի մի կոյս օրիորդ առեւանգուում է մի քիւրդ լիանապետի և սրա մի քանի չարագործ ընկերների ձեռքով, գաւառապետի ներկայութեամբ:

Հայաբնակ Գոպալ կոչուած գիւղի մէջ քրդերն՝ ըստ իրենց սովորութեան՝ մի Տարօի պատիւն իւր ամուսնու ներկայութեամբ բռնաբարած միջոցին՝ թշուառ զոհը կամուցած սանանալով մեանում է:

Մեր երկրի սահմանին մօտ՝ մէկ և կէս ժամ հեռաւորութեան վրայ գանուող Ելասան կոչուած գիւղի մի անուանի տան վրայ յարձակուելով՝ քրդերը թալանում են. այնտեղից անցնում են կէս ժամ հեռաւորութեան վրայ Դոդի կոչուած գիւղը և այնտեղի Բօյաճեան անուանի անից 100 լիրայ են պահում իբրև փրկանք, որպէս զի այնտեղի տանուտէր Պօղոս էֆենդին չսպանեն:

Այս մի երկու ցաւալի դէպքեր յիշատակելով, մենք ոսլատում ենք, որ այս մասին մեզ գրեն և բացատրեն, թէ դրանք վաս երեւակայութեան արդիւնք են, թէ դառն իրողութիւններ:

Յամենայն դէպս «Նոր-Դար»-ն իւր ստացած տեղեկութիւնները հաղորդակցեց յայտնի տեղից, որ մի որև է սխալ չունի:

ՔՐՈՆԻԿՈՆ

Թիֆլիսի արտիստական ընկերութեան մէջ փետրուարի 13-ին ուսւ թատերասէրների մի խումբ ներկայացրեց Սունդուկեանցի «Պէլօ» կամիզիան ուսերէն թարգմանութիւնը: «Պէլօն» վարուց ի վեր թարգմանուած էր ուսերէն և այդ թարգմանութիւնը տարիներ առաջ, կարծեաց, արդէն հանդէս է բերուած ուսւաց բեմի վրայ: Այս անգամ թարգմանութիւնն ուղղուած և համեմատուած էր բնագրի հետ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Պէլօյի» պէս գաւառարարքաոյ գրուած երկերը մեծ դժուարութիւններ են ներկայացնում օտար լեզուներով թարգմանելու, այնուամենայնիւ մեր դրամատուրգի պիեսի ուսերէն թարգմանութիւնը կարելի է ասղոջուած համարել, թէև, ի հարկէ, կորցրել է այն բոլոր այն ուժ համը, որ ունի բնագիրը: Սակայն մեզ ամենից աւելի հետաքրքրում էր ներկայացումը և պէտք է ասենք, որ այդ ներկայացումն անսպասելի կերպով ասղոջ էր. երեւում էր, որ ուսւ թատերասէրները բոլորն էլ գովելի ջանասիրութեամբ ուսումնասիրել էին իրենց ներկայացնելիք տիպերը, և այդ բանում թերևս քիչ օգտուած չլինէին հեղինակի տուած խորհուրդներից: Ուսւ հասարակութիւնն, ինչպէս երեւում էր, շատ հաւանեց «Պէլօն» և հեղինակին վարձատրեց բուռն ծափահարութեամբ բեմ կոչելով նրան:

—

Անցեալները Գորում վախճանուեց Սեվիանոս աւագ քահանայ Տէր-Սահակեանը, և ամբողջ Գորին ողբաց այդ անփոխարինելի կորուստը:

Անփոխարինելի ենք ասում, որովհետև հայութեան համար այդ չատ մեծացած, հայոց լեզուի պիտութիւնից զուրկ քաղաքը, ինչ հայ համայնքին է վերաբերում, դժուար թէ երկար տասնեակների ընթացքում կարողանայ ծնել և առաջ բերել այնպիսի մի անձն, ինչպիսին Սահակեանս քահանան էր, իբր լաւ և պակաս կոմպետան հանդիսանալու: Այդ իսկ պատճառով այն յարգանքը, որ հանգուցեալին արուեցաւ նրա թաղման ժամանակ, մենք միանգամայն հանգուցեալին արժանի ենք համարում: Միայն մի հանգամանք մեզ շատ խորթ է թուում, որի մասին մինչև օրս ոչինչ չհրատարակուեցաւ տեղական մամուլի մէջ:

Հանգուցեալ Սահակեանս քահանային թաղում են—տաղնով:

Սա առաջին և տարօրինակ երեւոյթն է ամբողջ Կովկասում. ոչ մեկ պատուելիան քահանայ չէ թաղուել—մուզիկով և կարելի էլ չէ, որ այդպիսի բան լինի:

Երբ այդ մասին կանխօրէն պատրաստում են տեղւոյն նորեկ երիտասարդ վարդապետին, նա ասում է, որ եկեղեցին չէ արգելում մուզիկով թաղումը, այդ մասին ոչինչ չկայ սահմանած:

Այս հանգամանքի վրայ հրատիրում ենք թեմական ս. Առաջնորդի ուշադրութիւնը: Մի՞թէ մեր եկեղեցու օրէնքները, կարգերը պիտի խափանուին և զոհուին—լուսաւորուած տղիտութեան:

Աղնիսի գաւառական քաղաքներ, ինչպիսին է Գորին, առանձնապէս փոքր ձուած և խոհեմ հովուի կարիք ունի, եթէ ոչ հօտը բոլորովին կըմոլորուի և կրտի:

—

Մենք յայտնել էինք արդէն, որ ընտրութիւններ սարքողներին դիւր չէ եկել ս. Բեթդհէմ եկեղեցում կատարուած ընտրութիւնը և աչքառու են բևկանել:

Արդ իմանում ենք, որ արժ. Անանիա Զնայելով որ հետևգութիւնից զժուարութեամբ էր տեղից չարժուում, բայց և այնպէս կարուածներին ինքն անձամբ էր կատարում: Նրա գովելի յատկութիւններից մէկն հենց այն էր, որ նա, թէև նեղ, անձնական, բայց սիրում էր գործ կատարել—մի յատկութիւն, որ չունէր վերջին եպիսկոպոսներից ոչ մեկը:

Ներսէս Ջնայելով որ հետևգութիւնից զժուարութեամբ էր տեղից չարժուում, բայց և այնպէս կարուածներին ինքն անձամբ էր կատարում: Նրա գովելի յատկութիւններից մէկն հենց այն էր, որ նա, թէև նեղ, անձնական, բայց սիրում էր գործ կատարել—մի յատկութիւն, որ չունէր վերջին եպիսկոպոսներից ոչ մեկը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՆԾ ԳՈՐԾԻ ՍԿԶԲՈՒՄ *)

Վ Է Պ

ԱՒԱՆԻՆ ՄԱՍ

V.

Մօտ տան բոլէից Շահհանն արդէն իրենց տանն էր: Միջանգամ վերարկուն հանելու և ծառային տալու վրայ էր, երբ, ինչպէս և սլատում էր նա, մայրը, գիշերային սպիտակ կոֆտով և գլխին սպիտակ թաշկինակ փաթաթած, չտալով զարթ եկաւ նրա առաջ: Թամարը ժամանակից չատ վաղ ծնրացած կին էր գարմանալի սպիտակ դէմքի խիստ համակրելի, ազնիւ և փափուկ գծագրութեամբ: Նրա, կարծես յոգնած, աչքերը հանդիստ ախորժութիւն էին արտայայտում մինչև անգամ այդ րոպէին, երբ, երկու ամիս բացակայութիւնից յետոյ, նորից տեսնում էր իւր միակաճար որգուն:

—Լաւն չան,—կամաց արտասանեց նա և կամաց զրկեց նրա գլուխը—վերջապէս եկար... Բայց այս անիրաւ եղանակին...

*) Տես «Նոր-Դար» № 26:

—Անիրաւ եղանակն ինչ պիտի անէր, մայրիկ, քանի որ վաղուանից համար սաք նատած էի:

—Ինչ ուզում է լինի, վաս եղանակ է, չատ... Բայց աչ, լաւ ես արել, որ եկել ես: Ա՜խ, ինչպէս ես, որդի ջան, ինչպէս: Ապա մէկ նայիմ երեսիդ, խօ չես լզարել:

Եւ մայրը, ձեռքերը դնելով որդու ուսերին, արտասուքից սլպղացող աչքերով սկսեց նայել նրա սովորաբար դժգոյն, բայց այդ գիշերը թեթև չառադունով պատած դէմքին:

Շահհանն աչխոյժ կերպով ծիծաղեց,

—Դու էլ այնպէս ընդունում ես ինձ, մայրիկ, որ, կարծես, տատ տարի է՝ չես տեսել. երկու ամիս է, էլի, որ գնացել եմ:

—Ա՜խ, անտառուած, երկու ամիսը քիչ է... Բայց խօ լաւ ես, լաւ:

—Շատ լաւ եմ, մայրիկ, այնպէս լաւ, որ երբէք այսպէս չեմ եղել:

—Բաս թող համբուրեմ:

Եւ մայրն իւր փափուկ, փոքր ինչ խոշտանգած, տատը չրթունքները սեղմից որդու ժպտող այտին:

Շահհանն երբէք չէր սիրել մօր համբոյրները, իսկ մայրն այդ կողմից միշտ չատ չաւալ էր դէպի նա. չէր սիրել նոյնպէս և այն բոլորը, ինչ որ առհասարակ կանացի թոյլ, քնքոյշ զգացմունքների զեղումն է. չէր սիրել, որովհետև այդ բոլորի մէջ նա միմիայն իւր տղամարդկային արժանապատուութեան ստորացումն էր տեսել, այն արժանապատուութեան, որ տղամարդուն թելադրում է միշտ բարձր մնալ կնոջից և առհասարակ այն ամենից, ինչ որ կանացի է: Դրա պատճառն այն էր, որ Շահհանը ջղաձիգ չէր և չունէր տղամարդի արժանապատուութիւն, բայց ուզում էր տղամարդ լինել և տղամարդու արժանապատուութիւն ունենալ:

Սակայն այս անգամ նա ոչ թէ չանախորժեց մօր համբոյրից, այլ և ինքը համբուրեց նրան, որ երբէք չէր պատահել: Ինչո՞ւ—Ո՛վ գիտէ, թէ նոր, տակաւին չատ թարմ տպաւորութիւնները և այդ տպաւորութիւններից ծնուած նոր, անծանօթ, թէև տակաւին իրենց որոշ գոյնը չընդունած զգացմունքներն ինչպէս և արդեն փոխում են մարդու ներքինը, գոնէ այնքան ժամանակ, մինչև որ այդ տպաւորութիւններն ու զգացմունքները թարմ են...

Հօր առողջութիւնը հարցնելով և տեղեկանալով, որ նա դեռ ևս քնած չէ, Շահհանն ուղղակի գնաց նրա մօտ: Երբ նա և մայրը ներս մտան աղա Մարգոի սենեակը, վերջինս, խալաթը հագին և թիւրքական ֆէսը գլխին, նատած էր իւր լայն բազկաթոռի մէջ և նայում էր դառնը: Լսած երեւոյթին, նա լսացել էր, որ հէզը արդէն է, և սպասում էր, թէ ահա արտիզ որ է՝ ներս կըմտնի: Ծնկների վրայ նա դրած ունէր աչխարհաբար թարգմանուած աւետարանը և ձախ ձեռքի ցուցամատը դրել էր ընթերցումը կիսատ թողած երեսների մէջ:

Շահհանի հայրը մօտ յիսուն տարեկան մարդ էր խոշոր արտաքինով: Նրա մարմինն աւելի չատ ուռած էր երեւում, քան թէ դրբ: Ֆիզիքական եռկտատեւ սուր ցաւը ձգձգել տանջացրել էր նրա տարիքած դէմքի մկանութիւնները: Մազերը բոլորովին սպիտակել էին: Աւետարանի չարունակ ընթերցումից նա չէր սովորել համբերատար լինել. նա ամեն բանի վրայ արտնջում էր, առանելապէս իւր հիւանդութեան վրայ, որ իսկապէս տասերի տանջում էր նրան: Բայց նա վերին տասիճանի բարի էր, թէև գուրկ չէր վող դիպչելու ընդունակութիւնից: Հիւանդութիւն տանելով, նա վիրջ էր դրել իւր տեսարակաս գործերին և ամուրդների ժամանակ քաղաքում մօտ տասը-քսան տեղ պանդոկ չէնքեր էր ձեռք բերել, որպէս զի այդ տեսակ չէնքերի վարձից ստացուած գումարով կարողանայ ապրել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Ամեն անգամ, որ մեր ազգային կյանքի մեջ մի նոր հարց է առաջանում,

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Փարիզ, 10-ին մարտի։

Թուրքական կառավարության ներկայացուցիչ Մ. Ֆ. Մելիկովը, որ Փարիզում էր եկել Հայկական հարցի վերաբերությամբ Ֆրանսիական կառավարության հետ բանակցություններ վարելու համար, վերադարձել է Կոստանդնուպոլիս։

Ֆրանսիական կառավարությունը, ինչպես հայտնի է, ցանկանում էր, որ Հայկական հարցի վերաբերությամբ Թուրքիայի հետ բանակցությունները վարվեին Փարիզում, բայց Թուրքիան չհամաձայնվեց այդ առաջարկությանը։

Ֆրանսիական կառավարությունը ցանկանում էր, որ Թուրքիան ընդունի Հայկական հարցի վերաբերությամբ Եվրոպական պետությունների միջնորդությունը

յաւ չորս ամիս չարունակ, յանկանա-
յով դրանով կառավարութիւնը մեզա-
դրելու համար ապացոյց ունենալ։

—Հունվի քաղաքական չրջաններում հաւատացնում են, որ Հումբերտ թագաւորը մարտի 14-ին, իւր ծննդեան օրը, ներսում է չնորհելու Սիցիլիայում և Մառա-Կարարում տեղի ունեցած անկարգութիւնների մէջ բոլոր մեղադրեալներին. վեց ամիս բանտարկութեան դատապարտածները բոլորն էլ ազատ կը թողնուին, իսկ ծանր պատժի ենթարկուածների պատժի ժամանակը կը կիսաւի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԵՐԼԻՆ, 15 փետրուարի.—Իայխստագում գրաֆ Միւրբախ առաց. Վոուսիայի հետ հաստատուած դաչնագիրը կը կոր-ծանէ պետութեան բազաքական հիմքը, գիւղական դասակարգին, կալուածատէրերին և միլիոնաւոր բանուորների. գերմանական արդիւնաբերութեանը Ռուսիայի արած պիջումները չնչին են. կառավարութիւնը կուի է մղում երկրի բարօրութեան դէմ ոգեալ-ուսումնավարների և ազատախոհների չնորհիւ։ Նրան հակառակ մինիստր Մարշալը Վոուսիան, առաց մինիստրը, գարձել է դէպի նոր ճանապարհ, որ երկու պետութիւններին էլ միակերպ օգտակար է։ Հին ուժերը տանելի չէ. 20 տարուայ ընթացքում Ռուսիան 5 անգամ բարձրացրել է սակագինը, և հետևանքն այն եղաւ, որ արձանագրութիւններ կազմուեցին, թէ գերմանական արդիւնաբերութիւնը վնասուած է։ Ռուսիայի սակագինն այժմ էլ դեռ ևս խիստ բարձր է, բայց դա առաջուայ սակագներից ցածր է, որ պիտանի է և հատատուած է 10 տարի ժամանակով։ Կառավարութիւնը դժուար թէ բարելաւէ երկրի դրութիւնը բացառապէս հողատէրերի մասին հոգալով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրուարի.—Նաւագնացութեան ներկայացուցիչների հանդուժմարը որոշից խնդրել վերացնելու նաւագնացութեան վրայ նշանակուած $\frac{1}{4}$% տուրքը և մանաւանդ նրանք հաստատել հարաւային գետերի վրայ։

ՊԱՐԻԶ.—Դատաւորն անորոշ ժամանակով ժամանակիը աչխատանքների պատասխատուից Մորնօ անիչխանակատին, որ ազանել էր գողութեան համար իրեն ձերբակալել ուզող ոստիկանական գործակալին։

ԼՈՆԴՈՆ.—Սաստկանում են այն լուրերը, թէ Գլադստոնը հրաժարական է տալիս, որովհետև տեսողութիւնը թուլացել է և կարիք է զգում հանգստանալու. ասում են, որ մինիստրութեան պարագլուխ լինելու է լորդ Ռոզբերին։ Ներկաների գործակալութեան հաղորդումներին Գլադստոնը պատասխանել է, որ այդ լուրերը հեղինակաւոր չեն։

—

ԲՈՐՍԱ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրուարի

—

Արտ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում 10 ֆ ստեր. համար 94, սակ.
Ռուբլիի 100 մար. 45,97½ —
Գարիզ 100 ֆրանկի. 37,32½ —
Արտ. կուրսի. արտադրութիւնն խոպան է. Նոր կուրսի պոյտով. 7,52 առք. 7,56 ծախ.
Արաքային կուրսը (100 մետալ բուրլան).
. . 150½ — 151 —
Պրծաքը . . . . — —
Բորսային գեղջը . 5 մինչև 7%
Գետ. բան. Ռ. հրատ. 5% տոմս. 102⅞ առք.
2-րդ . — —
1883 թուի 6% ոսկեայ ընտրը. 160¾ —
1884 թուի 5% — — — —
Արեւելեան 2-րդ փոխ. 100 և 1000 բուրլանոց % Ռ. հրատ. 102 —
,, ,, ,, Գ. հրատ. 162½ —
1864 թ. Ս. ներքին փոխառու.
վիճակահան. 5% տոմսեր . 244 սակ.
1866 թ. ե. ,, ,, 228 —
Արքունի երկաթուղային բոնդը 103 —
Ներքին փոխառ. 4% I սերիան 95⅝ —
,, ,, II սերիան 95⅝ —
,, ,, III սերիան 95⅝ —
,, ,, IV սերիան 95⅝ —
4½% երկաթուղ. փոխ I հրատ. 98⅞ առք.
,, II հրատ. 1893 թ. և 1893 թ.
փոխառութիւն . . . . . 100 սակ
Ագն. կալ. բան. 5% գրատթ. 101⅝ —
,, ,, 4½% — 99⅛ —
Արք. ագն. կալ. բան. 5% վճակահանութեան տոմսերը . 193¼ —
4½% չինական հոզ. բանկի վկայ. 99⅛ առք
Հարաւ-Արեւմտեան երկաթուղ.
4% օբլիգացիան . . 92¼ սակ
Մոսկուա-Փրազանի . . 91¾ առք
Խարկով-Ազովի . . . 99 —
Կուրսկ—Կիևի . . . 99 —
Կազ. փոխադ. վարկի բնկեր.
4½% բնկեր. գրատթղթերը 155¾ սակ.
5% . . . . . 101½ —
Գետերբուրգի քաղ. վարկի բնկ.
5% օբլիգացիան . . . 101¾ —
Մոսկուայի . . . . 101⅝ —
Օրենսգայի 5½% . . . 100¾ առք.
Թիֆլիսի . . . . . 98¼ —
Լենհատանի կալ. բանկի 5% գրատթղթերը . . 99 ծախ.
Խերսոնի նահանգի կալ. բանկի 5% 5½ գրատ. թղ. 101¼ առք. 100⅞ սակ.
Խարկովի կալ. բանկի 5% . 100 —
Գալուգայի . . . 99⅞ առք.
Տուլայի . . . 101¼ սակ
Կիևի . . . 100½ առք.
Մոսկուայի . . . 100½ սակ.
Բեսարաբիա—Տաւրիկեան . 99⅞ առք.
Նիժն.—Սամար. . . . 100¾ —
Դոնի . . . 99½ սակ.
Վիլնայի . . . 100 —
Թիֆլիսի 5% և 6% 101 առք. 98¼ առք.
Քուրսկի . 101⅜ և 98¼ —
Ակցիաների գները . . 484 սակ.
Միջազգային առևտրական . 518 —
,,Արտ. առևտ. ռուս. բանկի 379 —
Վոլգա-Կամայի առևտրակ. . 913 առք.
Սիբիրի բանկի. . . 630 սակ.
Բեսսարաբ.—Տաւրիկ. . 575 առք.
Խարկովի կալուածատեր. . 501 ծախ.
Գետերբ.-Տուլայի . . 422 —
Գալուգայի . . . 587 առք.
Նիժեգորոդ.-Սամարյի . 642 սակ.
Վիլնայի . . . 603 —
Դոնի . . . 715 առք.
Կիևի . . . 810 ծախ.
Մոսկուայի . . . 588 առք.
1827 թ. կրակից ապահովուող առևտր. ընկերութիւն . 1210 սակ.
Հիւսիս. ապահովուող ընկ. . — —
,,Ռոսսիա'' ,, ,, . 370 սակ.
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն . 750 առք.
,,Գաւկազ և Մերկուրի'' ընկ . 466 սակ.
Ռուս. երկթ. գլխ. ընկեր. . 278¼ —
Մոսկուա-Փրազանի երկաթ. . 484 առք.
Կուրսկ-Կիևի . . . 409 սակ.
Ռըբինսկ-Բոլոգովի . . 95½ —
Գրեազ-Ցարից. . . 175 —
Հարաւ-Արեւմտեան . 112¾ առք.
Բորսայի տրամադրութիւնը ամուր է

—

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՄԻ ԹԵՐԹԻ ԻՆՁ ԴԻՄ ԴՐՈՂ ՎԱՐԶԿԱՆ ԼՐԱՏՈՒՆԵՐԻՆ.

—

Մեծապատիւ խմբագիր, սոյն յօդուածը տեղիք է տալիս ինձ գրելու Թիֆլիսում հրատարակուող մի թերթի 8 №-ում տպագրուած պ. Վարաքեանի նամակը յանուարի 13-ին առաջնորդարանում կայացած հոգաբարձական բնութիւնն առթիւ և պ. Բարխանեանցի նամակը 1893 թ. № 13-ում։

Ուսուցիչները հրաւիրուած են կրթելու և ոչ դրդելու։ Իրեն մատաղ սերնդի դեկավարներ, նրանք պիտի լինին հասարակութեան մէջ օրինակ ճշմարտութեան և ազնուութեան։ Բայց ցաւելով պիտի ասեմ, որ թեմ. դպ. ուսուցիչներից մի քանիսը զուրկ լինելով այդ յատկութիւններից՝ իրենց անվայել պարքով հոգաբարձական գործերում, վատ տպաւորութիւն են թողնում մեզ վրայ։ Այդ ուսուցիչներից մէկն է և պ. Գ. Վարաքեանը։

Ինչն է ստիպում պ. նամակագրին չըացատրել իմ տասծները, թողնել ընդմարտութիւնը և մի քանի անվայել տեղական ակնարկներ տալով սևացնել թէ լրագրի և թէ իւր պատիւը։ Ահա, դրելով ընդմարտութեան ակզբում իմ տասծները՝ թողնում եմ ընթերցողների լուրջ դատողութեան։

Ես երկար տարիների ընթացքում քանիցս անգամ ընտրուած լինելով հոգաբարձու և խրատուած վորձերից, ընտրութեան ժամանակ մինչև թերթիկները բաժանելը նախապատի խոյտութեամբ պիտիցի պատրաստուածներին իմ հետաքրքիր կարծիքը բացատրելով թէ՝ ուրախանում հատարակութիւնը հոգաբարձուներ ընտրելուց յետոյ՝ թողնելով ընթանց վրայ տեղին պարտաւորութիւնները՝ հետանում է, որից և առաջ են գալիս գանազան իրաւացի և անիրաւացի արտաքնչներ, այդ չարիքները զարմանելու և ապագայում խոտոգութեան առարկայ չդառնալու համար, ես բարեաւք եմ համարում ամեն կերպ աչխատել նչանակել տալ վերատեսչող յանձնաժողով, որ վերատեսչի թէ անցեալ հոգաբարձուների, թէ ներկայ և թէ ապագայում եղող հոգաբարձուների գործունէութիւնը և որը ծանօթանալով հոգաբարձուների գործունէութեան հետ՝ կը ծանօթացնէ նրանց և հատարակութեանը։ Այս իմ ցանկութիւնը՝ երբ ես 1889 թուականից առաջ ընտրուած եմ եղել հոգաբարձու, դրատոր յայտնած եմ հոգաբարձութեանը Ալեքսեան եղբայրների օրօք։ Ապահետ այսօր մենք ժողովուել ենք մի վեհ գործի համար, իւրաքանչիւրիս սրբազան պարտականութիւնն է գործել առանց կրքի, առանց անձնականի, առանց կուսակցութեան և կանոնադրութեան յոդ. պաչտպանելով։ Ի միջի այլոց ես պատգամաւորների մէջ նկատելով մի երկու անձնաւորի, որոնք ոչ թէ միայն բնիկ չունեցին չէին, այլ մինչև անգամ Շուչու թեմին էլ չէին պատկանում և որոնք Մեղրեցոց եկեղեցում ընտրութեան ժամանակ խուովութեան պատճառներ են եղած, ես խնդրեցի նախագահին վերատել այդ տեսակ անձերի հետ բան առնելոյն կանոնադրութեան հետաձայն, ուշադրացնելով, որ ես կանոնադրութիւնը չխախտելու համար այդ տեսակ մարդկանց հետ չեմ մտնելիկիլ ընտրութեանը։ Երբ իմ այս առաջարկութիւնը նախագահը չյարգեց, այն ժամանակ մինչև թերթիկները բաժանելը ես դուրս գալով դահլիճից՝ հետացայ և ոչ թէ վախուտ տուի, ինչպէս նամակագիրն է ասում։

Թէ ինչն է ստիպել պ. Վարաքեանին թողնել իմ բոլոր տասծները և գրել անվայել խօսքեր, ահա պատճառը, որը ես իմացայ յետոյ տեսնելուց յետոյ տեսուչ պ. Սարգսեանցից։

Երբ պատգամաւորները ժողովուել էին դահլիճ ընտրդակցելու, յայտնուեց թէ՝ մի ոմն ցանկանում է մտնել ներսը որ չէի իմանում թէ ով է մտնողը կամ ինչ նպատակով, յայտնեցի, որ կոմմնակի անձինք իրաւունք չունեն միջամտել մեր գործին։ Այս խօսքերը դեռ չվերջացրած՝ մատ դահլիճ յիչեալ պարոնը, որի չնորհիւ ես տեսայ լրագրի էջերը։

Երբ մի քանի օրից յետոյ մատ հոգաբարձական դրատնեակը պ. Սարգսեանը, խօսք բացուեց և ես տասցի նրան թէ՝ պ. Վարաքեանի արարքն անտեղի է նրա կոչման։ Պ. Սարգսեանը հոգաբարձու պ. Թիւնիբէկեանցի և քարտուղարի ներկայութեամբ իմ հարցիս պատասխանեց թէ՝ պ. Վարաքեանի տիկոջ՝ նա դայրացած է եղել ինձ վրայ, որ կամեցել եմ թոյլ չտալ նրան ներս մտնելու, և այդ առիթով էլ այդպէս է գրել։

Ահա, ինչ է նչանակում կրքից բորբոքուած գրելը։

Ինչ վերաբերում է պ. Բարխանեի նոյն թերթի 1893 թ. 13-րդ №-ում Բաքուից գրած նամակի այն կէտին, որի մէջ նա ասում է՝—փոխան հրապարակ են հրաւիրում երկու հոգաբարձուներ, որոնք չորս ամբողջ տարի հետս էին մնացել գործերից, ոչ մի ժամանակ իրրև հոգաբարձու չեն հրաւիրած նախագահից, այսուհետ հարցը բարդ լինելով՝ ես ակամայից առաջարկ պիտի չկանգ առնեմ։

Երբ 1889 թ. Շուչու հայ հատարակութիւնն ընտրից ինձ, պ. Բարխանին և միւսներին հոգաբարձու, և երբ Բարախանն առանց ընդհանուր խորհրդի ընտրուեց գանձապահ, ես ապագայ չարիքներից և գիշդ ուններից ազատ մնալու համար առաջարկեցի հոգաբարձութեան միջնորդել ամ հարկը է և նչանակել տալ Շուչու հայ հատարակութիւնից վերատեսչող յանձնաժողով, որը պնդելով հոգաբարձական գործերը և համար ու հաշիւ տարով ժողովրդին, հետու պահի հոգաբարձուներին հատարակութեան արդարացի կամ անարդարացի բամբատանքներից, որոնք ծայրահեղութեան էին հասնում։ Այս էլ առաջ՝ ես ուզում էի այս կանոնը մացնել և ապագայի համար, որպէս զի ուսումնարանի չահերը չվնասուին։ Բայց երբ տեսայ խոչնդոտների է հանդիպում, ես դրատոր խնդրագրով մէջ բերելով մի քանի տեղի ունեցած դեղծումներ, դիմեցի հանդուցեալ կաթողիկոսին, իսկ վերջինս կողմից էլ մրնաց իրրև «ձայն բարբառոյ յանապատի»։

Կանոնադրութեան համաձայն ոչ մի անգամ հոգաբարձական խորհրդարանում հոգաբարձական նիստ չէր հայտնում որոշած ժամանակներում, այլ երբեմն-երբեմն ծածուկ խորհուրդներ էր լինում սրբազանի մօտ առանց իմ և միւսների մասնակցութեան։ Այս մասին քանիցս անգամ խնդրեցի սրբազանին նչանակել որոշած օրերում հոգաբարձական ժողովները և խորհրդակցել ընդհանուրի մասնակցութեամբ։ Սրբազանը թէև մի քանի անձերի մօտ խոստանում էր կատարել իմ արդարացի պահանջները, բայց իւր խոստումներն երբէք չէր կատարում։ Այս մասին նկատեցի և պ. Բարախանին հրատարակով մի քանի անձերի՝ պ. պ. Իւան Ա. Բաղանթարեանին, Բախչը-բէկ Աբրիբէկեան, Ջաւատ-բէկ Իչխանեանին և այլոց ներկայութեամբ առելով—«Ինչու թողած հոգաբարձական ժողովների համար որոշած օրերը՝ ծածուկ ժողովներ էք կազմում երբեմն Տէր Միքայէլեանցի հետ սրբազանի նախագահութեամբ և երբեմն մենակ դուք և սրբազանը»։ Չուտ ասրի ու կէս բացակայող հոգաբարձու Տէր-Միքայէլեանցին, երբ պատմեմ զալիս է Շուչի, իսկոյն հրաւիրում էք, իսկ ինձ կամ միւսներին, որ միշտ ներկայ ենք գտնում և ցանկացում եք, չէք հրաւիրում։ Ինչ է հանելուկ է այդ»։ Պ. Բարախանն իմ այս հարցերիս պատասխանում էր միշտ թէ «այդ նախագահի գործն է»։

Անցան հոգաբարձական երեք տարին, ները և պ. Բարախանն իւր վարմանքով ձեռքով գործում էր իւր քէֆի ուզածին պէս՝ վարձատրում ու զրկում էր ում կամենում էր, առանց իմ և միւսների գիտութեան։ Տեսէք, այնքան տաղանդ ունէր նա, որ առանց սինոդի թոյտութեան տրած մեծ-մեծ ծախերի մէջ և միջի այլոց իւր ձեռքով գրում էր ու գիտութեամբ Ա. Խաչատրեանցին։ Եւ ահա, այսպիսի անձնաւորութիւնը չանգրնում է հրապարակ խօսել այս կամ այն մարդու վրայ։—

(Վերջը միս անգամ)

Հոգաբարձու Ա. Խաչատրեանց.

Շուչի, 30 յունուարի։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵԼՈՍԻՊԵԴԻՍՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ!
Գ-ինը 163 Առաջիս կ՝ամեմ ամենալա
ը. անգլիական վելոսիպեդներ
որ ունին չնչելոյղ հեղեր «DUNLOP» 1893/94 թ.—Խնդրում եմ պահանջել ցուցականները։
Յարգանօք Վ. Գ. ՌԻԵԼՐՈՎ,
Ն. ՆՈՎԳՈՐՈԴ, Սուհարնայա—(Մ.) 5—4.

Ներկայ փետրուար 20-ին, կիրակի օրը, օծուելու է Գորու գաւառի Ս. խալքալաք գիւղի
ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՆ,
որը կառուցել են նոյն տեղի Յովհաննէս ուսոգ-քահանայ և իւր եղբայր Գալուստ Տէր-Գալաբեաններըն։
Ս. Օծումեան հանդէսը կը կատարէ գեր. Գէորգ եպիսկոպոս Սաւրէնեանը։
3—2

1894 Г.
Продолжается подписка
на
ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„БАКИНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“
(около 360 номеровъ въ годъ).
ЕЖЕДНЕВНО печатаются СОБСТВЕННЫЯ
телеграммы
(Отъ „Сѣвернаго телеграфнаго агентства“)
ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ доставкою въ г. Баку:		Съ пересылкою по почтѣ:	
На 1 годъ.	2 р. — к.	На 1 годъ	3 р. 50 к.
» 6 мѣсяцевъ . .	1 » 40 »	» 6 мѣсяцевъ .	2 » — »

ОТДѢЛЬНЫЕ НОМЕРА ПО 2 КОП.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ

За строку петита, отъ 1 до 3 разъ: на 1-й страницѣ 8 к., на 4-й 6 к.; болѣе трехъ разъ—по особой таксѣ. Годовыя объявленія: на 1-й страницѣ—по 1½, на послѣдней—по 1 коп. за строку петита. Ищущимъ труда и занятій и благотворительнымъ учрежденіямъ дѣлается 50%, казеннымъ учрежденіямъ 10% скидки. За годовыя объявленія въ 5 стр. петита въ отдѣлѣ „Адресъ-календарь“, съ правомъ мѣнять текстъ три раза, взим. по 12 руб.
Подписка и объявленія принимаются въ конторѣ газ. „Бакинскія Объявленія“ (Лалаевскій пр., помѣщеніе конторы типографіи Гюльбасарова и Шахбагова). Телефонъ № 123.

Доз. Цензурою Тифлисъ, 16-го. Февраля 1894 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.